



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՍԱԲԼԵՄՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ԶԵԿՈՒՅՑ

2013 թ. գարնանային գորակոչի ընթացքում գորակոչի
գործընթացի եւ գորակոչիկների իրավունքների
վիճակի մասին

ՎԱՆԱԶՈՐ

2013

Ձեկույցը պատրաստել են՝

Արթուր Մաքունց

Արմինե Մադիկյան

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներին են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:



Սույն զեկույցը ներկայացնում է 2013 թ-ի գարնանային գորակոչի /մայիս-հուլիս ամիսների/ ընթացքում բացահայտված օրենսդրական բացերը, օրենսդրության կիրառման խնդիրները, որոնք արձանագրվել են Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից: Կազմակերպությունը շարունակում է իրականացնել գորակոչի գործընթացի մշտադիտարկում՝ նպատակ ունենալով բացահայտել գորակոչիկների իրավունքների խախտման դեպքերը, տրամադրել իրավական աջակցություն, գտնել համապատասխան լուծումներ: Բացի այդ, մշտապես տրամադրում է իրավական աջակցություն գորակոչիկներին եւ նրանց հարազատներին, փորձում պաշտոնական տեղեկատվություն ստանալ գորակոչի վերաբերյալ համակարգային խնդիրների վերաբերյալ:

2013 թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում եւ նախագորակոչային եւ գորակոչային ժամանակահատվածում գորակոչիկների եւ նրանց հարազատների կողմից շարունակվել են բողոքները եւ մտահոգությունները՝ կապված ոչ պատշաճ բժշկական զննության իրականացման հետ, որի հետեւանքով առողջական լուրջ խնդիրներ ունեցող գորակոչիկները գորակոչվում են զինվորական ծառայության: Այսպիսով, շարունակվում է գերակա մնալ զինծառայողների անհրաժեշտ թվի ապահովումը՝ անտեսելով նրանց առողջական խնդիրները:

1. Ուսումնասիրության մեթոդոլոգիան

Տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր եւ հանդիսացել ՋԼՄ-ներում հրապարակված տեղեկությունները, գորակոչիկների եւ նրանց հարազատների կողմից տրամադրված տեղեկատվությունը, պաշտպանական գերատեսչությանը կազմակերպության կողմից հասցեագրված հարցումների պատասխանները, գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը: Ստացված տվյալները համեմատվել են ծնողների կողմից

տրամադրված տեղեկությունների հետ: Ոսումնասիրվել է գորակոչիկների բուժզննության եւ զինճառայությանը նրանց պիտանիության հարցը կարգավորող իրավական ակտը եւ բացահայտվել են թերությունները, որոնք հանգեցնում են նրանց իրավունքների խախտմանը: Ջորակոչիկների բժշկական փաստաթղթերը ուսումնասիրության են ենթարկվել բժիշկ-փորձագետի կողմից:

2. **Ջորակոչի գործընթացը, նախագորակոչային տարիքի անձանց եւ գորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող օրենսդրությունը**

Ջորակոչի գործընթացը եւ գորակոչիկների բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը արտացոլված են հետեւյալ իրավական ակտերում:

- «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով¹ ընդունված 1996 թ. սեպտեմբերի 16-ին:
«Զինապարտության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, գորակոչը, զինվորական ծառայությունը, պահեստագործում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը:
- «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով², ընդունված 2008 թ. նոյեմբերի 27-ին, որի 13-րդ հոդվածով նախատեսված ՀՀ պաշտպանության նախարարությունը հաստատում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի եւ վարժական հավաքների անցկացման, զինապարտների բժշկական եւ զինճառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը, 14-րդ հոդվածով նախատեսված:

¹ <http://www.arlis.am/>

² Տե՛ս նույն աղբյուրը

- 2010 թվականի փետրվարի 26-ի ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 175-Ն հրամանով, որը գործել է մինչև 2013 թ-ի հունիսի 11-ը
- 2013 թվականի հունիսի 11-ի ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանը զինապարտների և զինճառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և ՀՀ ՊՆ 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին, որով սահմանվում են ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն ու նրանց գործունեության կարգը, հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկը, որոնց հիման վրա որոշվում է.
- կցագրման, զորակոչի, վարժական հավաքների, հրամանատարաշտաբային վարժանքների և զորախաղերի ժամանակ զինվորական ծառայության քաղաքացիների պիտանիության աստիճանը՝ նկատի ունենալով նրանց առողջական վիճակը և ֆիզիկական զարգացման տվյալները,
- զինճառայողների, ինչպես նաև ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց մոտ ի հայտ եկած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների ու ՀՀ սահմանների պաշտպանության, զինվորական պարտականությունների կատարման կամ զինվորական ծառայության, ինչպես նաև նրանց մահվան պատճառահետևանքային կապը և այլն:

3. Զինճառայությանը պիտանիության հարցի կարգավորումը

Զինապարտների բժշկական փորձաքննության կարգը, որի արդյունքում որոշվում է քաղաքացու՝ զինվորական ծառայությանը պիտանիության հարցը՝ ելնելով նրա առողջական վիճակից, հաստատված էր ՀՀ պաշտպանության նախարարի N175 հրամանով, որը ուժի մեջ էր մտել 2010 թ-ի ապրիլի 10-ին և փոփոխության է ենթարկվել 2013 թ-ի հունիսին:



Համաձայն ՀՀ ՊՆ նախարարի N175 հրամանի՝ բժշկական փորձաքննության արդյունքում, ըստ առողջական վիճակի, քաղաքացին կարող էր ճանաչվել

1. Պիտանի շարային ծառայության,
2. Ոչ պիտանի՝ հանելով զինվորական հաշվառումից,
3. Ոչ պիտանի խաղաղ ժամանակ, պիտանի ոչ շարային ծառայության պատերազմի ժամանակ,
4. Ժամանակավորապես ոչ պիտանի,
5. Տարկետում՝ մինչև մեկ տարի կամ այլ ժամկետով,
6. Պիտանի ոչ շարային ծառայության,
7. Պիտանի շարային ծառայության՝ սահմանափակումով:

ՀՀ ՊՆ N175 հրամանում, սակայն, հստակեցված ու սահմանված չէր, «շարային», «ոչ շարային» կամ «շարային՝ սահմանափակումով» ծառայության բովանդակությունը: Այսինքն՝ սահմանված չէր «շարային», կամ «շարային՝ սահմանափակումով» ծառայության չափորոշիչները: Կազմակերպության ջանքերը՝ պաշտպանական գերատեսչությունից պարզելու, թե գոյություն ունի՞ արդյոք որեւէ նորմատիվ ակտ, որով սահմանվում են այդ չափորոշիչները մնացել են ապարդյուն:

2011 թ-ի հոկտեմբերի 10-ին կազմակերպությունը տեղեկատվության հարցմամբ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1.1) դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պարզելու համար, թե որոնք են «շարային՝ սահմանափակումով» ծառայության, «ոչ շարային» ծառայության պարտականությունների ցանկը եւ դրանց կարգավորման վերաբերյալ համապատասխան իրավական նորմերը: Ի պատասխան նշված հարցմանը՝ ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը 2011 թ-ի նոյեմբերի 21-ի գրությամբ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1.2) հայտնել է, որ ՀՀ ՊՆ համակարգում ներկայումս գործում է զորամասում ոչ շարային ծառայության հասկացության կիրառումը եւ մշակված է դրա կարգը: Սակայն զորամասերում ոչ շարային ծառայության կարգի տրամադրման վերաբերյալ կազմակերպության



2011 թ-ի դեկտեմբերի 9-ի հարցմանը (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1.3) ՀՀ պաշտպանության նախարարությունը չի պատասխանել եւ այն չի տրամադրել:

2012 թ-ի մարտի 2-ին կազմակերպությունը վերստին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ նույն պահանջով (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1.4): Պաշտպանական գերատեսչությունը իր 2012 թ-ի մայիսի 29-ին ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարը գրությամբ հայտնում է, որ կարգը չի կարող տրամադրվել այն պատճառաբանությամբ, որ ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թ-ի 175-Ն հրամանով հաստատված «Զինապարտների բժշկական եւ զինճառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը» վերամշակման ընթացքում է եւ կտրամադրվի միայն այն հաստատելուց հետո (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1.5):

Այսպիսով, «շարային» եւ «ոչ շարային» ծառայությունը կարգավորող նորմատիվ ակտի վերաբերյալ ստացել ենք իրարից տրամաբանորեն տարբերվող պատասխաններ: Ինչպես վկայում են կազմակերպության կողմից ստացված տեղեկությունները, պիտանի քաղաքացիները, որոնք ճանաչվել են «պիտանի ոչ շարային» կամ «շարային՝ սահմանափակումներով» ծառայությանը, իրականում գտնվել են լիովին շարային ծառայության մեջ, որն էլ հանգեցրել է ծառայության ընթացքում նրանց մոտ առողջական խնդիրների վատթարացմանը:

Ըստ բժիշկ-փորձագետի հավաստման՝ ՀՀ ՊՆ վերոնշյալ հրամանում հստակ սահմանված չեն նաեւ մի շարք հիվանդությունների ծանրության աստիճանների չափանիշները, ինչի հետեւանքով նույն ծանրությամբ հիվանդությունը կարող է դիտարկվել որպես թե՛ ծառայությունից ազատվելու, թե՛ չազատվելու հիմք: Այս հանգամանքը հանդիսանում է կոռուպցիոն ռիսկերի առաջացման հիմք: Խնդիրը բազմիցս տարբեր քննարկումների եւ հանդիպումների ժամանակ բարձրաձայնվել է կազմակերպության կողմից:

2013 թ-ի հունիսի 11-ին ուժի մեջ մտավ ՀՀ ՊՆ 410 հրամանը: Հրամանով սահմանված նոր կարգով ընդհանրապես հանվեց «ոչ շարային ծառայություն» հասկացությունը: Նախկին կարգով ոչ շարային ծառայության համար հիմք



հանդիսացող հիվանդությունների պարագայում նոր կարգում քաղաքացին ճանաչվում է պիտանի շարային՝ սահմանափակումով ծառայությանը: Այսպիսով, ՀՀ ՊՆ 410 Հրամանով ընդհանրապես հանվեց «ոչ շարային» ծառայությունը: Իսկ թե ինչ է նշանակում « շարային՝ սահմանափակումով» ծառայությունը, վերստին սահմանված չէ: Այսինքն, ՀՀ ՊՆ 410 Հրամանը բովանդակային առումով որեւէ բարեփոխում չի հանդիսանում, ավելին այն հանդիսանում է առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիների վիճակը վատթարացնող իրավական ակտ:

Նկատենք, որ ՀՀ ՊՆ 410 հրամանը ուժի մեջ մտավ հունիսի 11-ին՝ գարնանային գորակոչի ընթացքում՝ փոխելով գորակոչի կազմակերպման եւ իրականացման կարգը: Նման մոտեցումը հանդիսանում է իրավական պետության կարելուր սկզբունքի՝ իրավական որոշակիության սկզբունքի խախտում:

Այսպիսով, առողջական վիճակի զննության իրականացման կարգում սահմանված հիվանդությունների ցանկի փոփոխությունները հասկանալի չեն եւ՝ բովանդակային, եւ՝ հիմնավորման տեսանկյունից, ինչը իրավական պետության կարելուր սկզբունքի՝ որոշակիության խախտում է:

Միաժամանակ նշենք, որ կազմակերպությունը թե՛ ՀՀ ՊՆ, թե՛ ՀՀ ԱԺ Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովին բազմիցս ներկայացրել է այն մոտեցումը, որ քաղաքացիների իրավունքները սահմանափակող իրավական ակտը, որպիսին հանդիսանում է ՀՀ ՊՆ 175 եւ 410 հրամանները, պետք է կարգավորվեն ոչ թե ենթաօրենսդրական կարգով, այլ միայն օրենքով:³

³ Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության նախարարների հրամաններով, մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումներով ու կարգադրություններով չեն կարող սահմանվել իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները, ազատություններն ու արտոնությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը փոփոխող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ փոփոխող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմեր:

4. 2013 թ-ի գարնանային գորակոչի ընթացքում արձանագրված հիմնական խախտումների նկարագրությունը

Ընդհանուր տեղեկություններ

2013 թ-ին գարնանային գորակոչի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել 20 գորակոչիկ /եւ նրանց հարազատները/: Դիմողները հանդիսացել են Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերի բնակիչներ, (Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի մարզեր եւ Երեւան քաղաք):

Կազմակերպություն դիմած 20 գորակոչիկներից 18-ի խնդիրը կապված է եղել առողջական խնդիրների հետ, մեկի խնդիրը կապված է եղել տրանսպորտային ծախսերի փոխհատուցման եւ մյուսինը՝ կրթությունը շարունակելու հետ: Կազմակերպություն դիմած գորակոչիկների խնդիրների եւ նրանց լուծման ուղղությամբ կազմակերպության կողմից կատարված գործողությունների ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 2-ում:

Կազմակերպություն դիմած քաղաքացիներին տրամադրվել է իրավական աջակցություն: Հինգ գորակոչիկի տրամադրվել է բանավոր խորհրդատվություն, իսկ մյուսների խնդիրների առնչությամբ պատրաստվել են հարցումներ, պաշտոնական գրություններ: Ընդհանուր առմամբ պատրաստվել է 19 գրություն, որոնցից 16-ը հասցեագրված են եղել ՀՀ պաշտպանության նախարարությանը, 1-ը՝ ՀՀ վարչապետին, որով պահանջ է ներկայացվել ՀՀ ՊՆ-ից 27.09.2012 թ. տեղեկատվության հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու մասին, մեկը՝ Վանաձորի զինկոմիսարիատին:

18 գորակոչիկներից 5-ը ճանաչվել են պիտանի շարային ծառայությանը, 7-ը պիտանի սահմանափակումով ծառայությանը՝ չնայած բոլորի մոտ առկա առողջական խնդիրներին: 2 գորակոչիկի տրամադրվել է տարկետում 3 տարի

Համաձայն ՀՀ Սահմանադրության Հոդված 83.5. Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ սահմանվում՝

- 1) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը.
- 2) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները



Ժամանակով: 2 գորակոչիկ ճանաչվել են պիտանի զինձառայությանը, սակայն չեն գնացել ծառայության, քանի որ համաձայն չեն պիտանիության վերաբերյալ որոշման հետ: Նրանցից մեկն արդեն մի քանի անգամ տարկետում ստանալուց հետո է ճանաչվել պիտանի զինվորական ծառայությանը, չնայած այն հանգամանքին, որ առողջական վիճակի որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել:

Նկատենք, որ 2013 թ-ի գարնանային գորակոչի ընթացքում գրանցվել է դեպք, երբ ՀՀ պաշտպանական գերատեսչությունը չի տիրապետում զինձառայողների վերաբերյալ տվյալներին, որի ապացույց է հանդիսանում այն փաստը, որ գորակոչիկ Ա. Մ-ն դեռևս հանդիսացել է գորակոչիկ և ոչ թե զինձառայող, սակայն ՀՀ պաշտպանության նախարարի կողմից ստորագրված գրությամբ կազմակերպությանը հայտնվել է, որ Ա. Մ-ն 2012 թվականի աշնանային գորակոչի շրջանակներում ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության համար եւ գորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության: Այնինչ, Ա. Մ-ն գորակոչվել է 2013 թ-ի գարնանային գորակոչի ժամանակ:

Առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկների բուժզննության հետ կապված համակարգային խնդիրների նկարագրություն

Առողջական խնդիրներով դիմած 18 գորակոչիկների եւ նրանց ծնողների մտահոգությունները կապված են ինչպես կազմակերպական, այնպես էլ ընթացակարգային նշանակություն ունեցող խնդիրների հետ:

Ահազանգերի զգալի մասը կապված է գորակոչում ընդգրկված տարբեր պետական հաստատությունների՝ զինկոմիսարիատների, գորակոչիկների բուժզննությունն իրականացնող բժշկական հաստատությունների կողմից իրենց գործառույթների իրականացման ընթացքում բյուրոկրատական քաշքշուկների հետ: Զորակոչիկների խնդիրների կապակցությամբ գրությունների պատասխանների ստացումը կարող է տեւել 15 օրից մինչև երկու ամիս, որով չի պահպանվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները:



Ավելին, կան դեպքեր, երբ գրությանն ընդհանրապես չի տրամադրվում պատասխան /տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 2/:

Ինչպես նախկին գորակոչերի ընթացքում⁴, 2013 թ-ի գարնանային գորակոչի ընթացքում եւս գորակոչիկները չեն անցնում համալիր բուժզննություն: Արդյունքում, լուրջ առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկները ենթարկվում են գորակոչի, որի հետեւանքով զինված ուժերում ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ձեռք են բերում նոր հիվանդություններ:

Զորակոչիկներին շատ դեպքերում չի տրամադրվում կրկնակի բուժզննության ուղեգիր, եթե նրանք համաձայն չեն լինում առողջական վիճակի հետազոտության արդյունքների հետ: Այնուհանդերձ, տրամադրելու դեպքում գորակոչիկների կրկնակի բուժզննությունների իրականացումը անարդյունավետ է եւ շատ հաճախ կրում է ձեւական բնույթ:

Շարունակվում է գորակոչիկներին բժշկական զննության արդյունքների եզրակացության չտրամադրման արատավոր պրակտիկան՝ չնայած այն հանգամանքին, որ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված է անձի այդ իրավունքը:⁵

ՀՀ ՊՆ 410 Հրամանով վերստին չի լուծվել մի քանի հիվանդությունների զուգակցմամբ զինծառայությանը պիտանիության հարցը,⁶ որի մասին

⁴ http://hcav.am/wp-content/uploads/2012/12/%D5%80%D5%94%D4%B1%D5%8E_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_2012.pdf
http://www.hcav.am/attachments_/2df5c_zorakochi_zekuyec.pdf
[http://hcav.am/attachments_/5f854_zekuyec_zorakoch_2008\[1\].pdf](http://hcav.am/attachments_/5f854_zekuyec_zorakoch_2008[1].pdf)

⁵ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

⁶ http://hcav.am/wp-content/uploads/2012/12/%D5%80%D5%94%D4%B1%D5%8E_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_2012.pdf



կազմակերպությունը բազմիցս ահազանգել եւ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Առանձին հիվանդությունների դեպքում, եթե գորակոչիկը ճանաչվում է պիտանի շարային՝ սահմանափակումով ծառայությանը, մի քանի հիվանդությունների գուգակցման պարագայում վտանգվում է զինծառայողի կողմից զինվորական պարտականությունները լիարժեք եւ արդյունավետ կատարումը:

2013 թ-ի գարնանային գորակոչի դիտարկման ընթացքում մեզ հայտնի դարձավ, որ հստակ հրահանգ է իջեցվել գորակոչիկների բուժզննությունն անցկացնող բժշկական հաստատություններին, որպեսզի բուժզննության արդյունքներով բացահայտված առողջական խնդիրները ձեւակերպվեն առավել մեղմ կերպով, որով խեղաթյուրվել է գորակոչիկի առողջական վիճակի օբյեկտիվ պատկերը:

2013 թ-ի գարնանային գորակոչի ընթացքում արձանագրվել է, որ նախկինում մեկ կամ մի քանի անգամ տարկետում ստացած անձանց գորակոչում են զինծառայության՝ չնայած նրանց առողջական վիճակում որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել: Ի դեպ, նույն խնդիրների առկայությամբ նախկին գորակոչի/գորակոչերի ընթացքում տրամադրվել է տարկետում նախկինում նույն ախտորոշման հիմքով:

Դեռևս 2008 թ-ին⁷ կազմակերպության կողմից բացահայտվել էր բուժզննություն անցնելու նպատակով տրանսպորտային ծախսերի ոչ բավարար փոխհատուցման խնդիրը, որը մինչ այժմ չի լուծվել:


Տրանսպորտային ծախսերի ոչ բավարար փոխհատուցման պատճառով գորակոչիկը զրկվում է հանրապետական բուժզննություն անցնելու հնարավորությունից: Արդյունքում, առանց առողջական վիճակի համալիր բուժզննության անձը ենթարկվում է գորակոչի: Այս հարցն առավել արդիական է դարձել՝ հաշվի առնելով քաղաքացիների սոցիալական ապահովության վիճակի

⁷ [http://hcav.am/attachments /5f854_zekuyc_zorakoch_2008\[1\].pdf](http://hcav.am/attachments /5f854_zekuyc_zorakoch_2008[1].pdf)

վատթարացման պայմանները: Այնինչ, Համաձայն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ առողջական վիճակի պատճառով զորակոչիկները կարող են տարկետում ստանալ երկու դեպքում՝

1. Առաջին դեպքում զորակոչիկը տարկետում է ստանում պարտադիր բուժման կարիք ունենալու դեպքում,
2. Երկրորդ դեպքում զորակոչիկը ճանաչվում է ժամանակավորապես ոչ պիտանի եւ նրա բուժման համար կարող է տրամադրվել տարկետում
- 3 անգամ, մինչև 1 տարի ժամկետով /Տե՛ս Գծապատկեր 1./: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը կրկին անցնում է բժշկական հետազոտում, որի արդյունքում կարող են կայացվել հետևյալ որոշումներից մեկը՝

- ա. ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության
- բ. ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստագործում
- գ. ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:




Գծապատկեր 1. Պարտադիր բուժման կարիք ունենալու նպատակով տարկետում ստանալու ընթացակարգը

- 1 անգամ՝ 3 տարի ժամանակով /Տե՛ս Գծապատկեր 2./: Տարկետման ժամկետը լրանալուց հետո գորակոչիկը կրկին անցնում է բժշկական քննություն, որի արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա. ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և գորակոչվում է զինվորական ծառայության

բ. ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստագործում

գ. ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից



Գծապատկեր 2. Ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքում տարկետում ստանալու ընթացակարգը

Ըստ ներկայացված կարգի՝ գորակոչիկը կարող է տարկետում ստանալ առավելագույնը 3 անգամ, սակայն 2013 թ-ի գարնանային գորակոչի ընթացքում մենք արձանագրել ենք, որ առանձին գորակոչիկների տրամադրվել է 3-ից ավելի տարկետումներ: Նման դեպքերը ըստ մեզ, պայմանավորված է նրանքով, որ գորակոչիկի առողջական խնդիրները մնում են չլուծված, սակայն պաշտպանության նախարարությունը չի ցանկանում գորակոչիկներին ճանաչել ոչ պիտանի զինվորական ծառայության համար, այլ շարունակում է պահպանել նրանց որպես գորակոչային ռեսուրս:

4. Եզրահանգումներ

Այսպիսով, վերլուծելով 2013 թ-ի գարնանային զորակոչի գործընթացը՝ արձանագրում ենք հետևյալ խնդիրները.

Օրենսդրության

1. Բացակայում է զորակոչի կազմակերպման ընթացքում բժշկական գնտության եզրակացության ակտի բողոքարկման մեխանիզմը
2. Օրենսդրորեն չի կարգավորվում զորակոչիկի մոտ մի քանի հիվանդության զուգակցման պարագայում պարտադիր զինվորական ծառայության պիտանիության խնդրի լուծման կարգը
3. Ջորակոչի ընթացքում փոխվեց զորակոչի կազմակերպման կարգը, որը ըստ էության հանդիսանում է իրավական որոշակիության սկզբունքի խախտում, սակայն ըստ առողջական խնդիրների զինվորական ծառայության պիտանիության որոշման չափորոշիչները մնացին չհստակեցված
4. Հանրապետական բուժգնտության անցնելու տրանսպորտային ծախսերը չեն փոխհատուցվում բավարար չափով
5. Բացակայում է շարային եւ սահմանափակումներով ծառայության տեսակները կարգավորող ենթաօրենսդրական ակտը:

Օրենսդրության կիրառման

1. Ջորակոչի ընթացքում չի ապահովվում զորակոչիկների պարտադիր համալիր բժշկական հետազոտության իրականացումը՝ օրենքով նախատեսված ամբողջ ծավալով
2. Առաջին անգամ տարկետում ստացած զորակոչիկները միեւնույն հիվանդությունների առկայության դեպքում հաջորդ զորակոչին առանց հիմնավորման զորակոչվում են զինծառայության
3. Սահմանափակումներով ծառայության համար պիտանի ճանաչված զինծառայողները ընդգրկվում են շարային ծառայության մեջ
4. Չի գնահատվում զինծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում առողջական վիճակի հնարավոր զարգացումները
5. Ջորակոչիկներին զինծառայությունից ազատելու փոխարեն տրամադրվում է օրենքով սահմանված չափից ավելի տարկետումներ:

5. Առաջարկություններ

1. Ըստ առողջական խնդիրների գորակոչիկների՝ զինվորական ծառայությանը պիտանիության կարգը սահմանել օրենքով

Մինչ համապատասխան օրենքի ընդունումը ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները

2. Հստակեցնել հիվանդությունների ցանկում նշված հիվանդությունների սահմանումը՝ ըստ նրանց աստիճանների
3. Ամրագրել գորակոչիկին նրա առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական զննության եզրակացության մասին ակտի պարտադիր տրամադրումը՝ անկախ նրա դիմումի առկայությանը
4. Սահմանել գորակոչիկի մոտ մի քանի հիվանդությունների զուգակցման պարագայում զինծառայությանը պիտանիության որոշման կարգը
5. Ջորակոչիկի առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական եզրակացության ակտում որպես պարտադիր պայման ներառել զինվորական ծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում նրա առողջական վիճակի հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումների գրառումը եւ դրանց վատթարացումը կանխարգելող ցուցումները

Օրենսդրության կիրառումը

1. Ապահովել սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողների ներգրավումը բացառող, կանխարգելող անկախ վերահսկողական մեխանիզմ
2. Ապահովել գորակոչիկների եւ զինծառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ անկախ գանգատների առկայությունից
3. Ջորակոչիկների բուժզննության վերաբերյալ ախտորոշումը համապատասխանեցնել առողջության իրական վիճակին:

Հավելված 1.1



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax: (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2011- 279

11.10.2011 թ.

ՀՀ պաշտպանության նախարար

Սեյրան Օհանյանին

Հարգելի պարոն նախարար,

Մեր կազմակերպությունը իրականացրել է պաշտպանության նախարարի 2006 եւ 2010 թվականների N 378 եւ N 175 հրամաններով հաստատված *Ձինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ* կատարված փոփոխությունների ուսումնասիրություն:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ Ձեզ տրամադրել տեղեկություն, մասնավորապես հետևյալ հարցերի շուրջ.

1. Ինչո՞վ է պայմանավորված եւ ինչո՞վ է հիմնավորվում.

- 2006 թ-ի կարգում հոդված 1-ի՝ *Մտավոր հետամնացություն* բ) կետին, այն է՝ «չափավոր և թեթև աստիճանի մտավոր հետամնացություն», 2010 թ-ի կարգում «վարքային խանգարումներով» արտահայտության ավելացումը
- 2006 թ-ի կարգում հոդված 11-ի՝ *Կենտրոնական նյարդային համակարգի վարակիչ (մանրէային, վիրուսային) եւ վարակիչ-ալերգիկ հիվանդությունների հետեւանքներ գլխուղեղի եւ ողնուղեղի օրգանական ախտահարումներ՝ ընդհանուր վարակների, սուր եւ խրոնիկ ինտոքսիկացիաների ժամանակ* բ) կետի, այն է «ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով», վերափոխումը «ֆունկցիաների չափավոր խանգարումով» արտահայտության 2010 թ-ի կարգում
- 2006 թ-ի կարգում հոդվածի 22-ի՝ *Տուբերկուլոզ* գ) կետին «ակտիվ՝ մարող» արտահայտությանը «ոչ ակտիվ» արտահայտության ավելացումը
- 2006 թ-ի կարգում *Աչքի* մի շարք հիվանդությունների դեպքում բազմաթիվ փոփոխությունները:

2. Որոշ հիվանդությունների դեպքում ծառայության պիտանելիության բաժնում ըստ 2006 թ-ի գործող կարգի՝ «խաղաղ ժամանակ վերափորձաքննության ենթակա չլինելու» պահանջը հանվել է 2010 թ-ի կարգից: Որոշ հիվանդությունների առկայության դեպքում 2010 թ-ին գորակոչիկը ճանաչվում է ծառայությանը պիտանի սահմանափակումներով.

ա) ինչո՞վ է պայմանավորված նման փոփոխությունը

բ) որո՞նք են նշված սահմանափակումներով ծառայության պարտականությունների ցանկը, եւ ինչ իրավական փաստաթղթերով է կարգավորվում նման սահմանափակումները:

3. 2006 թ-ի կարգի պիտանելիության բաժնում որոշ հիվանդությունների առկայության դեպքում «Պիտանի են զինվորական ծառայությանը ծառայողական պարտականությունների սահմանափակումով» նորմը վերափոխվել է «Պիտանի են ոչ շարային ծառայության»:

Ինչո՞վ է պայմանավորված նման փոփոխությունը, որո՞նք են ոչ շարային եւ ծառայողական պարտականությունների սահմանափակումով ծառայության պարտականությունների ցանկը:

4. 2006 թ-ի կարգի որոշ հիվանդություններ ընդհանրապես հանվել են 2010 թ-ի կարգից: Դրանք են. 2006 թ-ի կարգում 4-րդ, 5-րդ եւ 8-րդ հոդվածներով նախատեսված հիվանդությունները:

Հաշվի առնելով այս հանգամանքը, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետեւյալի մասին.

- արդյո՞ք նման հիվանդություններ ունեցող զորակոչիկները պետք է զորակոչվեն ծառայության
- եթե ոչ, ապա ինչո՞վ է դա պայմանավորված:

5. Որոշակի հիվանդությունների դեպքում նախկինում սահմանված ծառայության համար «ոչ պիտանի» հասկացությունը դարձել է «Զորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն»: Ինչո՞վ է պայմանավորված նման փոփոխությունը: Ի՞նչ տևողություն է ենթադրում այդ ժամանակահատվածը, եւ որքա՞ն ժամանակ հետո զորակոչիկները կարող են պիտանի լինել ծառայության համար նման հիվանդության առկայության դեպքում:


6. Մի շարք հիվանդությունների դեպքում 2006 թ-ի կարգով նախատեսված պիտանելիությունը շարային ծառայությունից 2010 թ-ի կարգով փոխարինվել է ոչ շարային ծառայության: Ինչո՞վ է պայմանավորված տվյալ փոփոխությունը:

7. Բազմաթիվ հիվանդությունների դեպքում 2006 թ-ի կարգում առկա «Պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են ոչ շարային ծառայության համար պատերազմական ժամանակ» արտահայտությունը վերափոխվել է «Զորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի, զինծառայողները՝ պիտանի են ծառայությանը սահմանափակումով»: Ի՞նչ է ենթադրում նման փոփոխությունը, 1 տարի ժամկետից հետո ի՞նչ է նախատեսվում եւ ինչո՞ւ է հատկապես սահմանված 1 տարի ժամանակահատված:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքներով՝


կազմակերպության նախագահ



Արթուր Սաքունց

կատարող՝ Ա. Սադիկյան

էլ-փոստ՝ asadikyan@hcav.am





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« 21 » 11 2011 թ.
ՊԿ/ԲԻՈ-ԱԿ - 453

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության նախագահ
Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան 11.10.2011 թվականի Ձեր № Ե/2011-279 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Զինապարտների բժշկական և զինձառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը» վերանայվել և լրամշակվել է ՀՀ պաշտպանության նախարարի 19.08.2009թ. թիվ 898 հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից: Արդյունքում վերոնշյալ փորձաքննության կարգը հաստատվել է ՀՀ պաշտպանության նախարարի 2010թ. № 175-Ն հրամանով, որը՝ որպես նորմատիվ իրավական ակտ, գրանցվել և հրապարակվել է համապատասխան պաշտոնական կայքում, ինչը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին ծանոթության փորձաքննության անցկացման բոլոր մանրամասնություններին՝ դրանով իսկ բարձրացնելով այդ ընթացակարգի թափանցիկության և օրինականության ապահովման մակարդակը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են եղել 14 բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսորներ և 7 բժշկական գիտությունների թեկնածուներ, ովքեր ռազմաբժշկական փորձաքննության ոլորտում երկարամյա փորձ ունեցող և իրենց մասնագիտության ոլորտում ՀՀ ճանաչված մասնագետներ են:

Ըստ ներկայացված հարցերի՝

1-ին կետն ըստ ենթակետերի՝

1-ին ենթակետի վերաբերյալ փոփոխությունը կատարվել է՝ հաշվի առնելով «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման X վերանայման (1992թ.) տարբերակը, որը ներկայումս գործում է ՀՀ-ում.

2-րդ ենթակետի վերաբերյալ փոփոխությունը կատարվել է՝ հաշվի առնելով, որ սվյալ քանակակազմի հիվանդների բուժման արդյունքի գնահատման համար պահանջվում է մինչև 3 տարի ժամանակ.

3-րդ ենթակետում «ոչ ակտիվ» արտահայտությունը խմբագրական վրիպակ է, որի մասին ցուցումները տրված են.

4-րդ ենթակետի վերաբերյալ անհրաժեշտ է նշել՝ ավելի ստույգ ո՞ր հոդվածների մասին է խոսքը:

2-րդ կետն ըստ ենթակետերի՝

1-ին ենթակետի վերաբերյալ անհրաժեշտ է նշել՝ ո՞ր հոդվածների մասին է խոսքը.

2-րդ ենթակետի վերաբերյալ՝ յուրաքանչյուր հոդվածի կետերով նախատեսված սահմանափակումների մասին բացատրությունները տրված են հավելված 2-ում՝ ելնելով բժշկական ցուցումներից.

3-րդ կետի վերաբերյալ՝ ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ներկայումս գործում է զորամասերում ոչ շարային ծառայության հասկացության կիրառումը, մշակված է դրա կարգը.

4-րդ կետի վերաբերյալ՝ կարգի 1-ից՝ ներառյալ 9 հոդվածներն ամբողջովին վերանայվել են, հաշվի առնելով «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման X վերանայման (1992թ.) տարբերակը, որը ներկայումս գործում է ՀՀ-ում.


5-րդ կետի վերաբերյալ փոփոխությունը կատարվել է հաշվի առնելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի պահանջները.

6-րդ կետի վերաբերյալ անհրաժեշտ է նշել՝ ո՞ր հոդվածների մասին է խոսքը.

7-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ մի շարք հիվանդությունների ժամանակ ներկայումս կիրառվող բուժման մեթոդները հնարավորություն են տալիս գնահատել դրա արդյունքներն ավելի վաղ, օրինակ՝ 1 տարի անց: 1 տարի ժամանակը նախատեսված է բժշկական դիտարկման, բուժման և առողջական վիճակի դինամիկ հսկողության համար:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ
Ք.Հ.Ծ. 2-րդ դասի պետական խորհրդական



Գ. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՍԲԼԵԱՑԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2011- 09.12/30
09.12.2011թ.

ՀՀ Պաշտպանության նախարար

Ս. Օհանյանին

Հարգելի պարոն Օհանյան

2011 թ. Հոկտեմբերի 11-ին տեղեկատվության հարցմամբ դիմել եմ Ձեզ ստանալու տեղեկատվություն զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Հարցմանն ի պատասխան ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար Բ. Հ. Օ. 2-րդ դասի պետական խորհրդական Գ. Հայրապետյանի ՊՆ/310-Ադ-453 գրության, որի վերաբերյալ նեկայացնում եմ կազմակերպության Ե/2011-279 հարցման մեջ արձարծված հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն:

1. Ներքոնշյալ հիվանդությունների դեպքում 2010 թվականի զինապարտների բժշկական եվ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ կատարված փոփոխությունը ինչո՞վ է պայմանավորված և ինչո՞վ է հիմնավորվում:
 - 2006 թ-ի կարգում նշված «Տեսողության թուլություն՝ պայմանավորված բեկող միջավայրերի կամ ակնահատակի կայուն փոփոխություններով, ռեֆրակցիայի անոմալիոյով կամ այլ պատճառներով /վնասվածք, օրգանական հիվանդություններ և այլն» 2010 թ-ի կարգում փոփոխվել է «Տեսողության թուլություն, կուրություն»:
 - Ռեֆրակցիայի անոմալիաներ հոդվածի ենթակետերը կրել են փոփոխություններ:
2. Որոշ հիվանդությունների դեպքում ծառայության պիտանելիության բաժնում ըստ 2006 թ-ի գործող կարգի «խաղաղ ժամանակ վերափորձաքննության ենթակա չլինելու» պահանջը հանվել է 2010 թ-ի կարգից: Որոշ հիվանդությունների առկայության դեպքում 2010 թ-ին գորակոչիկը ճանաչվում է ծառայությանը պիտանի սահմանափակումներով, մասնավորապես հետևյալ հիվանդությունների դեպքում.
 - *Մտավոր հետամնացություն* բ/ կետ, այն է՝ թեթև և չափավոր արտահայտված մտավոր հետամնացություն,

- **Անձի խանգարումներ** բ/ կետ, այն է՝ հաճախակի դեկոմպենսացիաներով անձի խանգարումներ, ինչպես նաև կրկնվող իրավիճակային և անձնային ռեակցիաներ, որոնց հաճախությունը մեկ տարվա ընթացքում 3 և ավելի է
- **Կենտրոնական նյարդային համակարգի բնածին արատներ /զարգացման արատներ/, օրգանական զարգացող հիվանդություններ, ինչպես նաև միոպաթից, միասթենիա, մանկական ցերեբրալ կաթված և այլն** բ) կետ՝ ֆունկցիաների չափավոր կամ աննշան խանգարումով կամ դանդաղ զարգացող ընթացքով
- **Մեկ կամ երկու աչքի աֆակիա**

3. Մի շարք հիվանդությունների դեպքում 2006 թ-ի կարգով նախատեսված պիտանելիությունը շարային ծառայությունից 2010 թ-ի կարգով փոխարինվել է **ոչ շարային ծառայության**: Ինչո՞ւ է պայմանավորված տվյալ փոփոխությունը: Այդ հիվանդություններն են.

- **Թոքերի, շնչառական ուղիների <պլեվրայի, ոչ տուբերկուլյոզային բնույթի քրոնիկական հիվանդություններ, զարգացման արատներ, եվ սուր հիվանդություններից հետո կայուն մնացորդային երեվոյթներ** գ) կետ՝ ֆունկցիաների աննշան խանգարումով և հազվադեպ սրացումներով
- **Ակնագնդի շարժիչ նյարդի կայուն կաթված** բ) կետ՝ համագործակցված շլություն 20-ից մինչև 30 աստիճան դեպքում:


Համաձայն ՀՀ սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ տրամադրել տեղեկություն **թե ինչո՞ւ է պայմանավորված նման փոփոխությունը:**

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման x վերանայման (1992թ.) տարբերակի եւ գորամասերում գործող ոչ շարային ծառայության մշակված կարգի պատճենները:

Շնորհակալություն համագործակցության համար:


Հարգանքներով

կազմակերպության նախագահ՝



Արթուր Սարունց

Գատարող՝ Ա. Զայան
azalyan@hcav.am





ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՍԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր - Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hca@hca.am

Ե/2012- 02.03/62
02.03.2012թ .

ՀՀ Պաշտպանության նախարար

Ս. Օհանյանին

Հարգելի պարոն Օհանյան

2011 թ. հոկտեմբերի 11-ին տեղեկատվության հարցմամբ դիմել եմ Ձեզ ստանալու տեղեկատվություն զինապարտների բժշկական և զինճառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Հարցմանն ի պատասխան ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար Ք. Հ. Օ. 2-րդ դասի պետական խորհրդական Գ. Հայրապետյանը ՊՆ/310-Սդ-453 գրությամբ հայտնել է, որ կազմակերպության Ե/2011-279 հարցման մեջ արձարժված հարցերի վերաբերյալ անհրաժեշտ է ավելի մանրամասն տեղեկատվություն, որը 2011 թ. դեկտեմբերի 9-ին կազմակերպության Ե/2011-09.12/330 գրությամբ հասցեագրվել է Ձեզ: Այնուամենայնիվ, մինչ օրս վերոնշյալ գրությանը պատասխան չի տրամադրվել:

Վերստին , խնդրում եմ տրամադրել կազմակերպության Ե/2011-09.12/330 գրությամբ հայցվող տեղեկատվությունը:

Կից ներկայացնում եմ կազմակերպության Ե/2011-09.12/330 գրության պատճենը:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքներով

կազմակերպության նախագահ՝ Արթուր Սարունց

Գատարող՝ Ա. Ասադիկյան
asadikyan@hca.am



Handwritten signature of Artur Sarunyan



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

« 29 » 05 2012թ.
ՊՊՏԻՍ-ՆՊ-258

«ՇԵՆՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 02.03.2012թ. Ե/2012-02.03/62 գրության տեղեկացնում եմ,
որ ՀՀ պաշտպանության նախարարի 2010թ. փետրվարի 26-ի № 175 հրամանով
հաստատված «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական
փորձաքննության կարգը» ՀՀ պաշտպանության և առողջապահության
նախարարությունների գլխավոր մասնագետների հետ համատեղ ներկա պահին գտնվում
է վերանայման փուլում:

«Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական
փորձաքննության կարգի» վերամշակումից և հաստատումից հետո Ձեր բոլոր
հարցադրումներին կտրվի հիմնավոր պատասխան:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
(Բ.Հ.Ծ. 2-րդ դասի պետական խորհրդական

Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ	Անուն Ազգանուն	Բնակության վայրը	Կազմակերպության անվանումը	Ուղարկված պաշտոնական գրությունների քանակը	Խնդիրը	Գործի Բովանդակությունը	Հարցում տրամադրող մարմինը	Հարցումն ուղարկելու ամսաթիվը	ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ձեռնարկված միջոցները	Պատասխան գրության ստացման ամսաթիվը	Արձագանքը	Արդյունք
1	Ա. Մ.	Լոռու մարզ, ք. Վանաձոր	27.09.2012-2013	2	Առողջական	2012 թ-ի հուլիսի 7-ին Հանրապետական բժշկական հանձնաժողովի որոշմամբ Ա. Մ.-ին տրված 1 տարի ժամկետով տարկետումը վերափոխվել է 6 ամսի, սակայն այդ մասին հավաստող փաստաթղթեր գորակոչիկին չեն տրամադրվել: Բացի այդ, լինելով դեռևս գորակոչիկ և ոչ թե զինծառայող՝ ՀՀ ՊՆ գրությամբ կազմակերպությանը հայտնվել է, որ Ա. Մ.-ն արդեն գորակոչվել է ծառայության: Սակայն Ա. Մ.-ն գորակոչվել է 2013 թ-ի գարնանային գորակոչի ժամանակ:	ՊՆ	27.09.2012	2012 թ. սեպտեմբերի 27-ին ՀՔԱՎ գրասենյակը գրությամբ դիմել է ՀՀ ՊՆ, խնդրելով տրամադրել տարկետման ժամկետի փոփոխության մասին հրամանի պատճենը:	2ի տրամադրվել	2013 թ. հունվարի 29-ին ՊՆ-ից կազմակերպությանը տեղեկացվել է, որ տվյալ պարագայում 1 տարով կամ 6 ամսով տարկետման ժամկետի որոշման իրավունքը վերապահված է ոչ թե ԿԲՀ-ին, այլ հանրապետական գորակոչային հանձնաժողովին, հայտնելով նաև, որ գորակոչիկ Ա. Մ.-ն 2012 թ. աշնանային գորակոչի շրջանակներում ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության համար և գորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը և գորակոչվել զինծառայության
						ՀՀ վարչապետ	28.11.2012	2012 թ. նոյեմբերի 28-ին ՀՔԱՎ գրասենյակը վարչական բողոք է ներկայացրել ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանին՝ 27.09.2012թ տեղեկատվության հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:				
2	Դ. Պ.	ք. Երևան	13.05.2013	1	Առողջական	Դ. Պ.-ն ունի առողջական խնդիրներ, այն է՝ միջթիակային շրջանում առկա են պիզմենտային խալեր, սակայն 2013թ մայիսի 13-ի ԿԲՀ հետազոտությամբ ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, որի կապակցությամբ դիմել է կազմակերպություն:	ՊՆ	18.05.2013	Կազմակերպությունը՝ դիմելով ՀՀ ՊՆ, պահանջել է Դ. Պ.-ի նկատմամբ նշանակել բժշկական փորձաքննություն՝ զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը որոշելու համար:	12.06.2013	ՀՀ ՊՆ-ն 2013 թ. հունիսի 7-ի գրությամբ կազմակերպությանը տեղեկացրել է, որ Դ. Պ.-ն 13.05.2013 թ. ԿԲՀ-ի նիստում զննվել է մաշկավեներաբան և վիրաբույժ փորձագետների կողմից և «Միջթիակային շրջանի պիզմենտային նեուս» ախտորոշմամբ ճանաչվել է «պիտանի զինվորական ծառայությանը»:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը և գորակոչվել զինծառայության
3	Հ. Ք.	Լոռու մարզ, ք. Վանաձոր	13.05.2013	2	Առողջական	Հ. Ք.- ն շարունակական ցավեր ունի ամորձիների և աճուկի շրջանում, առկա է աջ մակամորձու կիստա: Սակայն 2013 թ. ապրիլի 18-ին բժշկական զննության արդյունքում նա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը, որի հետ նրա ծնողը համաձայն չէ:	ՊՆ	29.05.2013	Կազմակերպությունը ներկայացրել է ՊՆ-ին Հ. Ք.- ի առողջական խնդիրները՝ դիմելով որոշել զինվորական ծառայությանը վերջինիս պիտանելիության հարցը:	13.06.2013	2013թ հունիսի 11-ին ՊՆ-ից կազմակերպությանը տեղեկացվել է, որ հաշվի առնելով Հ.Ք.-ի մոր ներկայացրած գանգատները, Վանաձորի զինվորական կոմիսարիս ցուցում է տրվել Հ.Ք.-ին կրկնակի ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին: Վերոհիշյալի մասին 06.06.2013 տեղեկացվել է նաև մորը:	Տրամադրվել է տարկետում 3 տարով

						Չնայած այն հանգամանքին, որ Հ. Ք.-ն ներկայացվել է կրկնակի բուժզննության, նա չի ենթարկվել համալիր բուժզննության: Բացի այդ, զինծառայության գորակոչելու նպատակով իրականացված բուժզննության արդյունքում չեն արձանագրվել այն խնդիրները, որոնք արձանագրվել են քաղաքացիական բժշկական հաստատությունում: Ըստ ծնողի, նրան չեն ուղեգրում ևս մեկ բուժզննության, քանի որ վերջինս համաձայն չէ բուժզննության արդյունքների հետ:	ՊՆ	12.07.2013	ՀՔԱ Վանաձորի գրասենյակը երկրորդ անգամ դիմել է ՀՀ ՊՆ՝ Հ. Ք. -ի նկատմամբ նշանակել կրկնակի բժշկական փորձաքննություն զինվորական ծառայության պիտանելիության հարցը վերջնական որոշելու համար: Ներկայացվել է այն հանգամանքը, որ Հ. Ք.-ն կրկնակի բուժզննության ներկայացվելով՝ չի ենթարկվել համալիր բուժզննության և առողջական վիճակի հետ կապված որոշ խնդիրներ չեն ներկայացվել զինվորական բուժզննության արդյունքում:	14.08.2013	2013թ. օգոստոսի 7-ի գրությամբ ՀՀ ՊՆ-ից տեղեկացվել է, որ Հ. Ք.-ն 25.07.2013թ. ԿԲՀ նիստին ներկայանալով գննվել է վիրաբույժ և հոգեբույժ-բժիշկների կողմից: Վերջինիս ակտորոշվել է «աջ մակամորձու կիստա 0,4x0,3: Ներառված է չափավոր արտահայտված» և համաձայն ՀՀ ՊՆ 410-13 հրամանի 7-րդ հոդվածի «բ» կետի և 54-րդ հոդվածի «դ» կետի պահանջներին Հ. Ք.-ն ճանաչվել է «ժամանակավորապես պիտանի չէ խաղաղ ժամանակ» և տրվել է տարկետում 3 տարի ժամանակով:	
4	Ա.Բ.	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ	04.06.2013	1	Առողջական	Ա. Բ. -ն ունի լուրջ առողջական խնդիրներ (ոտնաթաթի և սրունքի մկանային ցավեր, շնչառության խանգարում, ողնաշարի կիֆոզ 2-3-րդ աստիճանի արկկոդմանի երկայնակի հարթաթաթություն, սրտի շրջանում ճնշող ցավեր): Սակայն կենտրոնական բժշկական հանձնաժողովը հաշվի չի առել նրա առողջական խնդիրները և որոշում է կայացրել հունիսի 23-ին Ա. Բ.-ին գորակոչել ՀՀ զինված ուժեր:	ՊՆ	05.06.2013	Կազմակերպությունը ՊՆ ուղարկած իր գրության մեջ ներկայացրել է գորակոչիկի առողջական խնդիրները, պահանջելով կրկնակի բժշկական հետազոտություն նշանակել Ա. Բ.-ին՝ զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը որոշելու համար:	28.06.2013	2013թ. հունիսի 21-ի գրությամբ ՊՆ-ից տեղեկացվել է, որ համաձայն ՀՀ ՊՆ 410-13 հրամանի 43-րդ հոդվածի «գ» կետի, 86-րդ հոդվածի «դ» կետի և 26 հոդվածի «բ» կետի Ա. Բ.-ն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով: Ա. Բ.-ն ներկայացվել է ԿԲՀ նիստին, գննվել փորձագետի կողմից և վերոհիշյալ կետերը հաստատվել են և նա ճանաչվել է «պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով»:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով եւ գորակոչվել ծառայության
5	Մ.Բ.	Սյունիքի մարզ, ք. Գորիս	27.12.2012	2	Առողջական	Մ.Բ. -ն ունի լուրջ առողջական խնդիրներ (սրտի ռիթմի խանգարում, կրծքավանդակի դեֆորմացիա, շնչառական խնդիրներ): Նախկինում նրան 2 անգամ տրվել է տարկետում, սակայն առողջական վիճակի փոփոխություն չի գրանցվել: Այնուամենայնիվ, նա ստացել է ՀՀ զինված ուժեր ծառայության գորակոչվելու մասին ծանուցում:	ՊՆ	27.12.2013	Կազմակերպությունը ներկայացրել է խնդիրը ՀՀ ՊՆ, մինչև նույն ժամանակ պահանջել ծառայության քննություն անցկացնել ՀՀ պաշտպանության նախարարի 2012թ. սեպտեմբերի 20-ի Ն 191 հրամանի համաձայն և արդյունքների մասին տեղյակ պահել կազմակերպությանը:	20.01.2013	2013թ. հունվարի 1-ի գրությամբ տեղեկացվել է, որ 29.12.2012թ.-ի 34-257/10692 արձանագրությամբ ՀՀ ՊՆ 175-10 հրամանի 12 «բ» հոդվածով Մ.Բ. -ին տրվել է տարկետում 5 ամիս ժամկետով:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով եւ գորակոչվել ծառայության
					Առողջական	2013թ. ապրիլ - մայիս ամիսների ընթացքում Մ.Բ. -ն անցել է մի շարք բուժզննություններ, ինչի արդյունքում որոշում է կայացվել վերջինիս գորակոչել զինվորական ծառայության, հաշվի չառնելով վերջինիս մոտ առկա առողջական խնդիրները (հավելյալ խորդա, սինկոպների հետևանքով առաջացած ուշագնացություն և այլն)	ՊՆ	12.06.2013	Կազմակերպությունը դիմել է ՀՀ ՊՆ՝ պահանջելով Մ.Բ. -ին նշանակել կրկնակի համալիր բժշկական փորձաքննություն զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը վերջնականապես որոշելու համար:	25.08.2013	2013թ. հուլիսի 25-ի գրությամբ տեղեկացվել է, որ կրկնակի ներկայացվելով ԿԲՀ նիստին՝ Մ.Բ.-ն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով:	
6	Ա. Մ.	Լոռու մարզ, գ. Կարմիր Աղեգի	15.06.2013	1	Առողջական	Ա. Մ.-ն ունի լուրջ առողջական խնդիրներ (երկրորդ աստիճանի ճարպակալում), սակայն ստացել է ՀՀ զինված ուժեր ծառայության գորակոչվելու մասին ծանուցում:	ՊՆ	19.06.2013	19.06.2013 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գրությամբ դիմել է ՀՀ ՊՆ Ա. Մ. -ի նկատմամբ նշանակել կրկնակի համալիր բժշկական փորձաքննություն զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը որոշելու համար:	19.07.2013	2013թ. հուլիսի 11-ին ՊՆ -ից տեղեկացվել է, որ Ա. Մ.-ն կրկնակի կներկայացվի ԿԲՀ նիստին: Այնուհետև նրա զինծառայությունը մեկ գորակոչով հետաձգվել է, որի ժամկետը լրանալուց հետո գորակոչվել է զինծառայության:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը և գորակոչվել զինծառայության

7	ժ. Մ.	Լոռու մարզ, ք. Վանաձոր	հուլիս 2013	1	<p>Առողջական</p> <p>ժ. Մ.-ն տառապում է գիշերաշրջություն հիվանդությամբ: ԿԲՀ-ն որոշում կայացնելիս անտեսել է Արմենիա բժշկական կենտրոնի տրամադրած իրավական ակտը, որում արձանագրված է կլինիկայում գտնվելու ընթացքում ժ. Մ.-ի մոտ սոմնամբուլիզմի նուպայի հայտնաբերումը: ԿԲՀ-ն որոշում կայացնելիս նաև անտեսել է Լ. Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ Մանկական սոմատիկ բաժանմունքի մի քանի փաստաթղթերը, որոնք նույնպես վկայում են, որ ժ. Մ.-ն տառապում է սոմնամբուլիզմով և ոչ վաղ անցյալում տևական ժամանակ ամբուլատոր կարգով դեղորայքային բուժում է ստացել: ԿԲՀ-ն վերը նշված իրավական փաստաթղթերն անտեսել է առանց որևէ հիմքի՝ կիրառելով երկակի ստանդարտներ:</p> <p>2. Արմենիա բժշկական կենտրոնի, ինչպես նաև քաղաքացիական բուժօգնության տրամադրած իրավական ակտերը ԿԲՀ-ի կողմից անտեսվելու հետևանքով ժ. Մ.-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ ՊՆ N 410-13 հրամանի 10-րդ հոդվածի սխալ կետ: 2013թ. ապրիլին նա 4-օրյա ստացիոնար բժշկական հետազոտություն է անցել «Արմենիա» բժշկական կենտրոնում, որտեղ մեկ անգամ ունեցել է սոմնամբուլիզմի նուպա: Սակայն զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը չի լուծվել: Անտեսելով փաստաթղթերը և հիմք ընդունելով միայն մեկ բժշկական կենտրոնի եզրակացությունը՝ ԿԲՀ-ն չարդարացված կերպով համարել է, որ ժ. Մ.-ի մոտ սոմնամբուլիզմը միայն «ըստ անամնեզի» է՝ այդպիսով իրեն թույլ տալով նրա նկատմամբ սխալմամբ կիրառել այլ կետ: Բացի այդ, բժշկական կենտրոններից մեկում հետազոտության 6-օրյա տևողությունն արդարացված չէ, քանի որ եթե տվյալ ժամանակահատվածի ընթացքում սոմնամբուլիզմի նուպա չի արձանագրվել, դա դեռևս հիմք չէ եզրակացնելու, որ հաջորդ օրերին սոմնամբուլիզմի նուպա չէր կարող լինել ու արձանագրվել, ուստի ժ. Մ.-ի ստացիոնար հետազոտությունը անհրաժեշտ էր շարունակել առնվազն մինչև 30 օր՝ նախարարի հրամանի համաձայն, և դրանից հետո միայն պիտոորոշումը համարել հստակեցված, որը չի արվել:</p>	ՊՆ	05.07.2013	05.07.2013 թ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ ՊՆ՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել ժ. Մ.-ի առողջական վիճակի պարզաբանման, զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար:	06.08.2013	2013թ հուլիսի 30-ի ՀՀ ՊՆ-ից տեղեկացվել է, 30.05-04.06.2013թ. «Էրեբունի» բժշկական կենտրոնում կրկնակի հետազոտություն անցնելու ընթացքում գիշերաշրջություն չի արձանագրվել: 25.06.2013թ ժ. Մ.-ն ներկայացվել է ԿԲՀ նիստին և ճանաչվել պիտանելի զինվորական ծառայությանը սահմանափակումով:	Ճանաչվել է պիտանելի զինվորական ծառայությանը սահմանափակումով եւ գորակոչվել ծառայության
---	-------	------------------------	-------------	---	---	----	------------	--	------------	--	---

8	Վ. Հ.	Կոտայքի մարզ, գ. Ալափարս	հուլիս 2013	1	Առողջական	Վ. Հ.-ն ունի առողջական խնդիրներ (պիզմենտային խալ), սակայն նա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գեահատմամբ Նրա նկատմամբ ԿԲՀ կայացրած որոշումն իրավաչափ չէ, հետեւյալի պատճառով: 1. ՀՀ ՊՆ N175 հրամանում 47 հոդվածը “Գ” կետ չի ունեցել, այն ավելացվել է 11.06.2013 թ-ին ուժի մեջ մտած ՀՀ ՊՆ N410 հրամանում, ուստի հոդվածի այդ կետի կիրառումը նախկինում 47 “Բ” հոդվածով փորձաքննություն անցած Վ. Հ.-ի նկատմամբ անթույլատրելի է, քանի որ ՀՀ օրենսդրությամբ նոր ընդունված իրավական-նորմատիվ ակտերում խստացումները հետադարձ ուժ չեն կարող ունենալ: 2. Ուղղորդության ազգային կենտրոնում 19.032013-21.03.2013 Վ. Հ.-ի հետազոտությունը փաստել է, որ ձախ բազկի հետին մակերեսին գտնվող նորագոյացության չափերը 2010-ի հետ համեմատ մեծացել են, այսինքն՝ արձանագրվել է նորագոյացության աճ, բացասական դինամիկա: Քանի որ Վ.Հ.-ի առողջական վիճակում 2010 թ-ից ոչ միայն դրական դինամիկա չի արձանագրվել, այլ հակառակը, ապա անհասկանալի է, թե ինչ հիմքով 2013 թ-ին կրկին չի կիրառվել 2010 թ-ին վերոնշյալ հրամանի կիրառված 47 հոդվածի “Բ” կետը, հատկապես, եթե նկատի ունենանք, որ N175 և N410 հրամաններում 47 հոդվածի “Բ” կետի պարզաբանման մեջ տվյալ ախտորոշման մասով որևէ փոփոխություն չի եղել:	ՊՆ	05.07.2013	Կազմակերպությունը դիմել է ՀՀ ՊՆ՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել Վ. Հ.-ի առողջական վիճակի պարզաբանման, զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար:	Չի տրամադրվել	Մի քանի անգամ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները փորձել են ճշտել գրությանը պատասխան չտրամադրելու պատճառները: Մտավորապես մեկ ամիս հետո հետախուսագին միջոցով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցը տեղեկացել է, որ ՀՀ ՊՆ-ն գրությունն ստանալուն պես այն վերահասցեագրել է Հանրապետական զինվորախառնակ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցը փորձել է Հանրապետական զինվորախառնակի ղեկավարին լրացրել, թե ինչ է կատարվել այդ ուղղությամբ, որին ի պատասխան հայտնվել է, որ բժիշկը արձակուրդում է: Ավել ուշ, հոկտեմբեր ամսվա ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցը կրկին փորձել է Հանրապետական զինվորախառնակի ղեկավարին լրացրել, թե ինչ է իրականացվել գրության ուղղությամբ, որին ի պատասխան հայտնել են, որ բժիշկը տեղում չէ: Հոկտեմբերի 22-ին բժիշկը տեղեկացրել է, որ պատասխան գրությունը պատրաստվել է և ուղարկվել:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակում ուժ եւ գորակոչվել ծառայության
9	Ա. Ա.	Շիրակի մարզ, գ. Սարիար	08.07.2013	1	Առողջական	Ա. Ա.-ն տառապում է երևանյան հիվանդությամբ, որի ժառանգականությունը մեկ անգամ հաստատվել է եւ որի հիման վրա նա նախկինում մեկ անգամ տարկետում էր ստացել, սակայն 2013 թ-ին նա ծանուցում է ստացել գորակոչման մասին: Բացի այդ, գորակոչիկը պահանջել է կրկնակի հետազոտության անցկացում, սակայն նրան չի տրամադրվել ուղեգիր:	ՊՆ	10.07.2013	Կազմակերպությունը դիմել է ՀՀ ՊՆ՝ Ա. Ա.-ին անհապաղ ռազմաբժշկական փորձաքննության ենթարկելու և զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը լուծելու համար:	06.08.2013	2013 թ. հուլիսի 30-ի գրությամբ ՊՆ-ից տեղեկացվել է, որ 2009թ. Ա. Ա.-ն անցել է մի շարք բուժօգնություններ և 2009թ. ստացել է տարկետում 3 տարով: 2012 ևս անցել է մի շարք բուժօգնություններ և ստացել է տարկետում 5 ամիս ժամկետով՝ բուժման նպատակով: 30.05.2013թ ԿԲՀ նիստում ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը «արտի կողմից պաթոլոգիա չի հայտնաբերվել ըստ ակտի» ախտորոշմամբ: 12.07.2013թ գորակոչվել է ՀՀ ՊՆ թիվ 59337 գրամաս:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը և գորակոչվել զինծառայության
10	Գ. Մ.	Լոռու մարզ, ք. Տաշիր, գ. Արծնի	06.07.2013	1	Առողջական	Գ. Մ.-ն ունի առողջական խնդիրներ (դժվարալսություն, գլխապտույտներ) և չնայած դրան, նա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը եւ ստացել գորակոչման ծանուցում, որի հետ ծնողները համաձայն չեն եղել:	ՊՆ	10.07.2013	10.07.2013թ կազմակերպության կողմից դիմում է ուղարկվել ՀՀ ՊՆ՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել և Գ. Մ.-ի նկատմամբ նշանակել կրկնակի բժշկական փորձաքննություն՝ զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը լուծելու համար:	06.08.2013	2013թ. հուլիսի 30-ի գրությամբ ՀՀ ՊՆ-ից տեղեկացվել է, որ 2012-2013թթ. ընթացքում «Թիվ 2», «Մուրբ Գր. Լուսավորիչ», «Արմենիա» բժշկական կենտրոններում բուժօգնություններ անցնելու արդյունքում Գ. Մ.-ն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով: 03.07.2013թ ԿԲՀ նիստում փորձագետի կողմից գննվելով, Գ. Մ.-ն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակում ուժ եւ գորակոչվել ծառայության

11	Կ. Ս.	Լոռու մարզ, ք. Սպիտակ	18.06.2013	Բանավոր խորհրդատվություն	Առողջական	Զորակոչիկ Կ.Ս.-ն ունի առողջական խնդիրներ (ուռուցք գլխում): Զինծառայությանը նրա պիտանիության հարցի կապակցությամբ բանավոր խորհրդատվություն է տրամադրվել:	Հարցում չի ուղարկվել	Հարցում չի ուղարկվել	Տրամադրվել է բանավոր խորհրդատվություն: Ուսումնասիրվել են նրա մոտ առկա բժշկական փաստաթղթերը:	Հարցում չի ուղարկվել		Տրամադրվել է տարկետում 3 տարով
12	Կ.Պ.	ք. Երևան	03.07.2013		Կրթական	2011թ. առողջական խնդիրների պատճառով Կ.Պ.-ին տրամադրվել է տարկետում 3 տարով, որի ժամկետը լրանալու է 2014թ. մարտի 1-ին: Սակայն վերջինս ճանաչվել է «Զեխիայի Հանրապետությունում բարձրագույն հաստատություններում օտարերկրացիներին ուսման օժանդակելու համար» ծրագրի մասնակից և սովորելու է այնտեղ 2013թ. սեպտեմբերի 3-ից 2014թ. սեպտեմբերի 30-ը: Կ.Պ.-ի խնդիրը կայանում է նրանում, որ տարկետմամբ սահմանված ժամկետն ավարտվում է 2014թ. մարտի 1-ին: Ուստի նա խնդրում է ՀՀ ՊՆ բժշկական հետազոտությունը նշանակել 2014թ. սեպտեմբերի 30-ից հետո:	Հարցումն ուղարկվել է քաղաքացու կողմից	Հարցումն ուղարկվել է քաղաքացու կողմից	Կազմակերպությունն իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել Կ.Պ.-ին և օգնել իր անունից դիմել ՀՀ կրթության եւ գիտության նախարարին տարկետման երկարաձգման հարցով:	Հարցում չի ուղարկվել	Չի տրամադրվել տարկետում	Շարունակում է կրթությունը
13	Ա.Ա.	Լոռու մարզ, ք. Վանաձոր	28.06.2013	1	Առողջական	Ա.Ա.-ն ունի տեսողության խնդիր, սակայն բուժզննություն անցնելուց հետո ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության համար, որի հետ ծնողը համաձայն չի եղել եւ ցանկացել է բողոքարկել, որի համար նրան չեն տրամադրվել բոլոր բժշկական փաստաթղթերը:	Վանաձորի զինվորական կոմիսարիատ	03.07.2013	2013թ. հուլիսի 3-ին կազմակերպությունը գրությամբ դիմել է Վանաձորի զինվորական կոմիսար Ա. Թումանյանին՝ բժշկական զննության փաստաթղթերը Ա.Ա.-ին տրամադրելու խնդրանքով:	19.07.2013	2013թ. հուլիսի 12-ին Վանաձորի զինվորական կոմիսարիատից տեղեկացվել է, որ Ա.Ա.-ին տրամադրվել են պահանջվող փաստաթղթերը:	Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով եւ գորակոչվել ծառայության
14	Գ.Զ.	Լոռու մարզ, ք. Վանաձոր	28.06.2013		Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	2013 թ. հունիսի 28-ին կազմակերպություն դիմած Գ. Զ.-ի հայրը հայտնել է, որ իր որդին 3 անգամ մեկնել է Երևան՝ մանրամասն բժշկական հետազոտություն անցնելու: Յուրաքանչյուր անգամ նրան տրամադրվել է 2400 դրամ տրանսպորտային ծախսերի համար, որը բավարար չի եղել այնտեղ մնալու համար, և ծնողը ստիպված նրան լրացուցիչ գումար է տրամադրել:	Հարցում չի ուղարկվել	Հարցում չի ուղարկվել	Կազմակերպությունը տեղեկացրել է, որ տվյալ հարցով կազմակերպությունը բազմիցս առաջարկներ է ներկայացրել ՀՀ ՊՆ՝ այդ հարցին կարգավորում տալու համար:	Հարցում չի ուղարկվել		
15	Անանուն	Լոռու մարզ, ք. Վանաձոր	2013 թ.	Բանավոր խորհրդատվություն	Առողջական		Հարցում չի ուղարկվել	Հարցում չի ուղարկվել	Տրամադրվել է բանավոր խորհրդատվություն զինվորական ծառայությունից տարկետում ստանալու վերաբերյալ			
16	Անանուն	Լոռու մարզ, ք. Վանաձոր	2014 թ.	Բանավոր խորհրդատվություն	Առողջական		Հարցում չի ուղարկվել	Հարցում չի ուղարկվել	Տրամադրվել է բանավոր խորհրդատվություն զինվորական ծառայությունից տարկետում ստանալու վերաբերյալ			
17	Անանուն	Լոռու մարզ, ք. Վանաձոր	2015 թ.	Բանավոր խորհրդատվություն	Առողջական		Հարցում չի ուղարկվել	Հարցում չի ուղարկվել	Տրամադրվել է բանավոր խորհրդատվություն զինվորական ծառայությունից ազատման վերաբերյալ			

18	Գ. Վ.	Լոռու մարզ, ք. Վանաձոր	14.12.2012-2013	2	Առողջական Գ. Վ.-ն ունի առողջական խնդիրներ (արտի ռիթմի խանգարում՝ վերփորոքային ռիթմացարի միգրացիա: Մինուսային տախիկարդիա, արտահայտված բրադիկարդիա, երկկողմանի երկայնակի հարթաթաթություն 1-2-րդ աստիճանի). Գ. Վ.-ն 2012թ.-ից ի վեր պարբերաբար դիմել է ՀՀ Վ.Վանաձորի գրասենյակ՝ զինվորական ծառայությանը պիտանելիության հարցի պարզաբանման աջակցելու նպատակով: Ձորակոչիկին մի քանի անգամ տրամադրվել է տարկետում 2012 թ-ին, սակայն 2013 թ-ին նույն հիվանդությունների առկայությամբ ԿԲՀ-ն որոշել է զորակոչել եւ տրամադրել ծանուցում այդ մասին:	ՊՆ	18.12.2012	2012 թ. դեկտեմբերի 18-ին կազմակերպությունը դիմել է ՀՀ ՊՆ՝ Գ. Վ.-ի առողջական վիճակի համալիր հետազոտության իրականացման, առողջական վիճակի պարզաբանման և զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցին լուծում տալու նպատակով, քանի որ նախկինում նույն հիվանդության առկայությամբ տարկետում է ստացել, իսկ այս տարի ոչ, որիը անհասկանալի է զորակոչիկի ծնողին:	Պատասխան չի տրամադրվել		Դեռևս չի զորակոչվել զինվորական ծառայության
					Չնայած Գ. Վ.-ի առողջական խնդիրներին, նրան զորակոչում են ծառայության և ստիպում, որպեսզի նա ստորագրի զորակոչման մասին ծանուցումը՝ սպառնալով, որ հակառակ դեպքում նա կենթարկվի քրեական պատասխանատվության զինծառայությունից խուսափելու համար:	ՊՆ	27.12.2012	2013թ. դեկտեմբերի 27-ին կազմակերպությունը դիմել է ՀՀ ՊՆ՝ նախարարի 2012թ. սեպտեմբերի 20-ի Ն 191 հրամանի համաձայն անցկացնել ծառայողական քննություն և արդյունքների մասին տեղյակ պահել կազմակերպությանը:	21.01.2013	2013թ. հունվարի 15-ին ՀՀ ՊՆ հայտնել է, որ Գ. Վ.-ն ԿԲՀ որոշմամբ 12.12.2012 թ. 24-91/6607 արձանագրությամբ ՀՀ ՊՆ 175-10 հրամանի 26 «դ» հոդվածով ճանաչվել է պիտանի ոչ շարային ծառայության:	
19	Մ.Ղ.	Շիրակի մարզ, ք. Գյումրի	հուլիս 2013	1	Առողջական Մ.Ղ.-ն ունի առողջային խնդիրներ՝ ընդհանուր թուլություն, հոդացավեր, թուրք, աղիների դիսբակտերիոզ: Մակայն բժշկական հանձնաժողովը ներկայացրել է այնպիսի ախտորոշումներ, որոնք չեն համապատասխանում Մ.Ղ.-ի իրական առողջական վիճակին: Վերջինիս տրամադրվել է ծանուցագիր 2013թ հուլիսի 15-ին ՀՀ ԶՈՒ զորակոչվելու համար	ՊՆ	13.07.2013	2013թ. հուլիսի 13-ին կազմակերպությունը դիմել է ՀՀ ՊՆ՝ ձեռնարկել միջոցներ Մ.Ղ.-ի առողջական վիճակի պարզաբանման, զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը որոշելու համար:	06.08.2013 14.08.2013	1. 2013թ. հուլիսի 30-ին ՀՀ ՊՆ-ի կողմից գրությամբ ներկայացվել են Մ.Ղ.-ի անցած բժշկական զննությունների ամսաթվերն ու արդյունքները, մասնավորապես, վերջինս 2013թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում հետազոտվել է «Արմենիա» բժշկական կենտրոնում, ինչպես նաև «Մրտաբանության» ԳՀԻ-ի ռենատոլոգիայի բաժանմունքում, «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի» ԳԿ-ում, «Հանրապետական տուբերկուլյոզային դիսպանսեր»-ում: Յորաբանչյուր հետազոտության արդյունքում նա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով: 09.07.2013թ Մ.Ղ.-ն ներկայացել է ԿԲՀ նիստին, որտեղ հաստատվել են հետազոտությունների արդյունքում նշված հոդվածները և Մ.Ղ.-ն ճանաչվել պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով: 2. 2013թ. օգոստոսի 8-ին նույնաբովանդակ գրությամբ ՀՀ ՊՆ ևս ներկայացրել է Մ.Ղ.-ն անցած բժշկական հետազոտությունները, որոնց արդյունքում նա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով:	ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով եւ զորակոչվել ծառայության

20	Ս. Հ.	Կոտայքի մարզ, ք. Աբովյան	հուլիս 2013	1	Առողջական	Ս. Հ.-ի մոտ առկա են լուրջ առողջական խնդիրներ (Ժիլբերի սինդրոմ, լյարդի պիգմենտացոյացման չափավոր խանգարում)	ՊՆ, ի գիտություն Աբովյանի տարածքային զինվորական կոմիսարի	29.07.2013	2013թ. հուլիսի 30-ին կազմակերպությունը գրություն է ուղարկել ՀՀ ՊՆ՝ տեղեկացնելով խնդիրը և պահանջով միջոցներ ձեռնարկել Ս. Հ.-ի առողջական վիճակի պարզաբանման, զինվորական ծառայությանը նրա պիտանելիության հարցը որոշելու համար:	16.08.2013	2013թ. օգոստոսի 9-ին ՀՀ ՊՆ-ի կողմից գրությամբ ներկայացվել են Ս. Հ.-ի անցած բժշկական հետազոտությունների ամսաթվերը՝ տեղեկացնելով, որ վերջինս պիտանի է ճանաչվել զինվորական ծառայությանը սահմանափակումով:	Դեռևս չի գորակոչվել զինվորական ծառայության
----	-------	--------------------------	-------------	---	-----------	---	--	------------	---	------------	---	--

Ներկայացվում է գորակոչիկների մի քանի դեպքերի նկարագրությունները.

1. Ջորակոչիկ Ա. Բ-ն ունի լուրջ առողջական խնդիրներ, որոնք, սակայն, կենտրոնական բժշկական հանձնաժողովը բուժզննության ընթացքում հաշվի չի առել: Ա. Բ-ի մոտ առկա բազմաթիվ առողջական խնդիրները եւ գանգատները, ինչպես նաեւ նրա կողմից ներկայացված փաստաթղթերը, եւ առողջական վիճակի եզրակացության հիման վրա Հանրապետական գորակոչային հանձնաժողովը որոշում է կայացրել հունիսի 23-ին Ա. Բ-ին գորակոչել: Բացի այդ, բժշկական հաստատությունում, որտեղ նա անցել է բուժզննություն, բանավոր կերպով տեղեկացում են առողջական վիճակի առավել լուրջ աստիճանի մասին, սակայն բժշկական փաստաթղթերում ներկայացվում է ավելի թույլ աստիճան: Կենտրոնական բժշկական հանձնաժողովը բուժզննության ընթացքում հաշվի չի առել Ա. Բ-ի մոտ առկա բազմաթիվ առողջական խնդիրները եւ գանգատները, ինչպես նաեւ նրա կողմից ներկայացված փաստաթղթերը, եւ առողջական վիճակի եզրակացության հիման վրա Հանրապետական գորակոչային հանձնաժողովը որոշում է կայացրել հունիսի 23-ին Ա. Բ-ին զինված ուժեր գորակոչելու վերաբերյալ: Նմանատիպ ահազանգ նշել է նաեւ գորակոչիկ Հ. Ք-ն:

2. Ջորակոչիկներ Ա. Ա-ն եւ Հ. Ք-ն փաստում են, որ համաձայն չլինելով իրենց առողջական վիճակի հետազոտման վերաբերյալ եզրակացության հետ, խնդրել են ուղեգիր, որպեսզի ենթարկվեն կրկնակի բժշկական զննության, սակայն նրանց մերժել են ուղեգրել համապատասխան բժշկական հաստատություն կրկնակի բուժզննության արդյունքում նրանք երկուսն էլ գորակոչվել են զինվորական ծառայության: Բացի այդ գորակոչիկ Ա. Ա-ին տեղական բժշկական հանձնաժողովի բժիշկներից մեկը հայտնում է, որ Ա. Ա-ի առողջական վիճակի հետազոտման վերաբերյալ եզրակացության ակտի ստորագրությունը չի պատկանում իրեն, որի մասին տեղեկացվել է զինկոմիսարիատը, սակայն որեւէ լուծում հարցին չի տրվել այն հիմնավորմամբ, որ ընդամենը շփոթմունք է տեղի ունեցել: Նույն կերպ, գորակոչիկ Ա. Մ-ն ունենալով առողջական լուրջ խնդիրներ, անցել է բժշկական հետազոտություն, սակայն նրան տրամադրվել է վերջնական եզրակացություն՝ առանց կրկնակի հետազոտման, չնայած այն հանգամանքին, որ Զինապարտների եվ զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու եվ ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի N 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՊՆ հրամանի 32-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին գորակոչային տեղամասերին կցագրելու և պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու ժամանակ զինկոմիսարիատները կազմակերպում և անցկացնում են նրանց համակողմանի ուսումնասիրություն՝ առողջական և ֆիզիկական զարգացման վիճակը գնահատելու համար:

3. Ջորակոչիկ Ա. Ա-ն զինկոմիսարիատի որոշումը բողոքարկելու համար պահանջել է, որպեսզի զինկոմիսարիատը տրամադրի բժշկական զննության հետ կապված փաստաթղթերը, սակայն պահանջի դեպքում միայն տրամադրում են Երևան քաղաքում իրականացված բուժզննության արդյունքները՝ նրանից թաքցնելով տեղական հանձնաժողովի եզրակացությունը (ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք):

4. Չորակոչիկ Ա. Մ-ն ունենալով առողջական լուրջ խնդիրներ, անցել է բժշկական հետազոտություն, սակայն նրան տրամադրվել է եզրակացություն առանց համալիր հետազոտման: Ըստ նրա ծնողի՝ նրա մոտ առկա երկրորդ աստիճանի ճարպակալման պատճառները չեն հետազոտվել եւ բացահայտվել, որի պատճառով ունեցել է անել զարկերակային բարձր ճնշում: Բժշկի կողմից բանավոր կերպով ծնողին տեղեկացվել է, որ ճարպակալումը շատ ուտելու հետեւանք է: Այնինչ կազմակերպության բժիշկ-փոճագետի հավաստմամբ բժշկական հանձնաժողովը պարտավոր է հետազոտել եւ բացահայտել գորակոչիկի մոտ առկա ճարպակալման երեւոյթը, որը չի իրականացվել եւ արդյունքում գորակոչիկը գորակոչվել է ծառայության:
5. Չորակոչիկ Ա. Հ-ն ուներ ուժեղ գլխացավեր, դյուրագրգիռ եւ շուտ վիրավորվող էր, ինչպես նաև հաճախակի է սրտի շրջանում ցավեր ունեցել, որի համար մշտապես օգտագործել է դեղահաբեր: Արագ քայլելիս կամ վազելիս շունչը կտրվում և թուլանում էր: Հետեւաբար, 2009 թ-ին հետազոտվելով «Նորք» հոգեբուժական հիվանդանոցում, ստացել է «դիսոցիալացված /կոնվերսիոն/ խանգարում» ախտորոշումը, որի հիման վրա կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշմամբ ստացել է 3 տարի ժամանակով տարկետում: 2012 թ-ի սեպտեմբերի 26-28-ն ընկած ժամանակահատվածում կրկին հետազոտություն է անցել «Նորք» հոգեբուժական հիվանդանոցում, որից հետո տրվել է առողջական վիճակի հետազոտման ակտը նախկին՝ նույն ախտորոշմամբ: Սակայն այդ նույն ախտորոշմամբ այս տարի նա գորակոչվել է զինծառայության:
6. Չորակոչիկներ Գ. Մ-ն, Ա. Մ-ն, Դ. Պ-ն, Ա. Բ-ն, Մ. Բ-ն, Ա. Մ-ն, Ժ. Մ-ն, Ա. Ա-ն եւ Ս. Հ-ն մի քանի հիվանդությունների առկայությամբ գորակոչվել է զինված ուժեր՝ ճանաչվելով կամ պիտանի շարային ծառայությանը, կամ պիտանի ծառայությանը՝ սահմանափակումներով:
7. Չորակոչիկ Ժ. Մ-ն Վանաձորի զինվորական կոմիսարի ուղեգրով 02.04.2013-08.04.2013 ժամանակահատվածում Արմենիա բժշկական կենտրոնի նյարդաբանական բաժանմունքում գտնվել է ստացիոնար հետազոտման մեջ՝ գանգատվելով հիմնականում գիշերաշրջիկությունից: Բուժհիմնարկում գտնվելու ընթացքում Ժ. Մ-ի մոտ արձանագրվել է սոմնամբուլիզմի մեկ նոպա: Նա դուրս է գրվել «Սոմնամբուլիզմ բժշկական փաստաթղթերով: Կլինիկայում ունեցել է սոմնամբուլիզմի մեկ նոպա: Կրկնակի ԷԷԳ-ն նեգատիվ է» ախտորոշմամբ: Քաղաքացին Վանաձորի զինվորական կոմիսարի ուղեգրով 30.05.2013-04.06.2013 ժամանակահատվածում Էրեբունի բժշկական կենտրոնում գտնվել է ստացիոնար հետազոտման մեջ՝ ներկայացնելով նույն հիմնական գանգատը: Դուրս է գրվել «Սոմնամբուլիզմ ըստ անամնեզի: ԷԷԳ-վիդեո մոնիտորինգի ընթացքում գիշերաշրջիկական էպիզոդներ չեն արձանագրվել /ըստ 03.06.2013թ./: ԷԷԳ առանց պաթոլոգիական փոփոխությունների» ախտորոշմամբ: 25.06.2013-ին Կենտրոնական բժշկական հանձնաժողովը քաղաքացու ախտորոշումն արձանագրել է «Սոմնամբուլիզմ՝ ըստ անամնեզի: ԷԷԳ-վիդեո-բացասական: ԷԷԳ-առանց փոփոխությունների»՝ հավանաբար հիմք ընդունելով Էրեբունի բժշկական կենտրոնի եզրակացությունը, այնուհետև Մարուքյանի նկատմամբ կիրառել է ՀՀ ՊՆ N410-13 հրամանի 10-րդ հոդվածի «Գ» կետը (առաջին սյունակ)՝ նրան ճանաչելով պիտանի զինվորական ծառայությանը՝ սահմանափակումով: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումն, այսպիսով, պարունակում է ոչ իրավաչափ տարրեր, քանի որ՝
1. ԿԲՀ-ն որոշում կայացնելիս անտեսել է Արմենիա բժշկական կենտրոնի տրամադրած իրավական ակտը, որում արձանագրված է կլինիկայում գտնվելու ընթացքում Ժ. Մ-ի մոտ

սումնամբույժովի նույնի հայտնաբերումը: ԿԲՀ-ն որոշում կայացնելիս նաև անտեսել է Լ. Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ Մանկական սոմատիկ բաժանմունքի մի քանի փաստաթղթերը, որոնք նույնպես վկայում են, որ Ժ. Մ-ը տառապում է սոմնամբույժովի և ոչ վաղ անցյալում տևական ժամանակ ամբուլատոր կարգով դեղորայքային բուժում է ստացել: ԿԲՀ-ն վերը նշված իրավական փաստաթղթերն անտեսել է առանց որևէ հիմքի՝ կիրառելով երկակի ստանդարտներ:

2. Արմենիա բժշկական կենտրոնի, ինչպես նաև քաղաքացիական բուժօգնության տրամադրած իրավական ակտերը ԿԲՀ-ի կողմից անտեսվելու հետևանքով Ժ. Մ-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ ՊՆ N 410-13 հրամանի 10-րդ հոդվածի սխալ կետ: Համաձայն վերոնշյալ հրամանի «Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների առանձին հոդվածների կիրառման պարզաբանումներ» բաժնում 10-րդ հոդվածի տարբեր կետերի կիրառման պարզաբանումների՝ «եթե գիշերաշրջիկությունը հաստատվում է բժշկական հետազոտությամբ, ապա այդ գորակոչիկների համար կիրառվում է սույն հոդվածի «Բ» կետը», իսկ «եթե չկան հաստատող փաստաթղթեր, և ախտորոշումը հաստատվել է ըստ անամնեզի, ապա նրանք հետազոտվում են սույն հոդվածի «Գ» կետի համաձայն»: Այսպիսով, վերը նշված բուժօգնությունների իրավական ակտերը անհիմն կերպով չանտեսելու պարագայում ԿԲՀ-ն պարտավոր էր Ժ. Մ-ի նկատմամբ կիրառել ոչ թե 10-րդ հոդվածի «Գ», այլ՝ «Բ» կետը, այն է՝ «գորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն» զինվորական ծառայության: Բայց, փաստորեն, անտեսելով այդ փաստաթղթերը և հիմք ընդունելով միայն Էրեբունի բժշկական կենտրոնի եզրակացությունը՝ ԿԲՀ-ն չարդարացված կերպով համարել է, որ Ժ. Մ-ի մոտ սոմնամբույժովի միայն «ըստ անամնեզի» է՝ այդպիսով իրեն թույլ տալով նրա նկատմամբ սխալմամբ կիրառել 10-րդ հոդվածի «Գ» կետը:

3. Համաձայն ՀՀ ՊՆ N410 հրամանի «Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների առանձին հոդվածների կիրառման պարզաբանումներ» բաժնում 10-րդ հոդվածի տարբեր կետերի կիրառման պարզաբանումների՝ «Գիշերաշրջիկությունը (սոմնամբույժով) նույնպես դիտվում է որպես ընկնավորության ձև», իսկ «ընկնավորությունը պետք է հաստատվի մինչև մեկ ամիս տևողությամբ ստացիոնար հետազոտմամբ», ուստի ստացիոնար հետազոտության տևողության մասին հիշատակումը վերաբերվում է նաև սոմնամբույժովին: Եթե Արմենիա բժշկական կենտրոնում Ժ. Մ-ի ստացիոնար հետազոտության ընդամենը 7-օրյա տևողությունն արդարացված է (քանի որ հետազոտության նպատակը սոմնամբույժովի հայտնաբերումը կամ ժխտումն է, իսկ այդ 7 օրվա ընթացքում արձանագրվել է սոմնամբույժովի մեկ նույն, ուստի ախտորոշումը հստակեցվել է և հետագա ստացիոնար հետազոտության շարունակումը հետազոտության նպատակին արդեն հասած լինելու՝ ախտորոշման հստակեցման պատճառով կարող էր անհրաժեշտ չհամարվել, ուստի՝ ստացիոնար հետազոտության դադարեցումը արդարացված է), ապա Էրեբունի բժշկական կենտրոնում հետազոտության 6-օրյա տևողությունն արդարացված չէ, քանի որ եթե տվյալ ժամանակահատվածի ընթացքում սոմնամբույժովի նույն չի արձանագրվել, դա դեռևս հիմք չէ եզրակացնելու, որ հաջորդ օրերին սոմնամբույժովի նույն չէր կարող լինել ու արձանագրվել, ուստի Ժ. Մ-ի ստացիոնար հետազոտությունը անհրաժեշտ էր շարունակել առնվազն մինչև 30 օր՝ նախարարի հրամանի համաձայն, և դրանից հետո միայն ախտորոշումը համարել հստակեցված: Այսպիսով, Էրեբունի բժշկական կենտրոնի տրամադրած եզրակացությունը պետք է համարվի ՀՀ ՊՆ N410-13 հրամանի տրամաբանությանը չհամապատասխանող, ուստի չէր կարող ու չի կարող հիմք ծառայել Մարտի 1-ի զինվորական ծառայությանը պիտանեղության հարցը որոշելու համար:

8. Ջորակոչիկ Վ. Հ-ն (ծնված1989 թ-ին) 02.03.2010-04.03.2010 թ-ին հետազոտվել է Ուռուցքաբանության ազգային կենտրոնում: Համաձայն պաշտոնական փաստաթղթերի՝ գանգատվել է զախ բազկի պիգմենտային խալի առկայությունից, նշում է տվյալ գոյացության առկայությունը վաղ տարիքից: Օբյեկտիվ հետազոտությամբ ձախ բազկի հետին մակերեսին հայտնաբերվել է պիգմենտային խալ՝ մազակալումով, չափսերը՝ 8-4 սմ: Ախտորոշումը՝ նույնը: 21.04.2010-ին, հիմք ընդունելով բժշկական հետազոտության տվյալները, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշմամբ Վ. Հ-ն ճանաչվել է ծառայությանը ժամանակավորապես ոչ պիտանի՝ համաձայն ՀՀ ՊՆ N175-2010 հրամանի 47 հոդվածի “Բ” կետի (“Բարորակ նորագոյացություններ և պարազիտար կիստաներ՝ հագուստի կրելը դժվարացնող կամ օրգանների ֆունկցիաները չափավոր խանգարող”):

19.03.2013-21.03.2013 թ-ին զինապարտը կրկին հետազոտվել է Ուռուցքաբանության ազգային կենտրոնում: Օբյեկտիվ հետազոտությամբ ձախ բազկի հետին մակերեսին հայտնաբերվել է պիգմենտային խալ՝ մազակալումով, չափսերը՝ 9-6 սմ: 14.06.2013 թ-ին Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշմամբ Հակոբյանը ճանաչվել է պիտանի շարային ծառայությանը՝ սահմանափակումով՝ համաձայն ՀՀ ՊՆ N410-13 հրամանի 47 հոդվածի “Գ” կետի (Բարորակ նորագոյացություններ և պարազիտար կիստաներ՝ օրգանների ֆունկցիաներն աննշան աստիճանի խանգարող):

Այսպիսով, 14.06.2013 թ-ին ԿԲՀ կայացրած որոշումն իրավաչափ չէ, քանի որ.

1. ՀՀ ՊՆ N175 հրամանում 47 հոդվածը “Գ” կետ չի ունեցել, այն ավելացվել է 11.06.2013 թ-ին ուժի մեջ մտած ՀՀ ՊՆ N410 հրամանում, ուստի հոդվածի այդ կետի կիրառումը նախկինում 47 “Բ” հոդվածով փորձաքննություն անցած Վ. Հ-ի նկատմամբ անթույլատրելի է, քանի որ ՀՀ օրենսդրությամբ նոր ընդունված իրավական-նորմատիվ ակտերում խստացումները հետադարձ ուժ չեն կարող ունենալ:
2. Ուռուցքաբանության ազգային կենտրոնում 19.03.2013-21.03.2013 Վ. Հ-ի հետազոտությունը փաստել է, որ ձախ բազկի հետին մակերեսին գտնվող նորագոյացության չափերը 2010-ի հետ համեմատ մեծացել են, այսինքն՝ արձանագրվել է նորագոյացության աճ, բացասական դինամիկա: Քանի որ Վ. Հ-ի առողջական վիճակում 2010 թ-ից ոչ միայն դրական դինամիկա չի արձանագրվել, այլ հակառակը, ապա անհասկանալի է, թե ինչ հիմքով 2013 թ-ին կրկին չի կիրառվել 2010 թ-ին վերոնշյալ հրամանի կիրառված 47 հոդվածի “Բ” կետը, հատկապես, եթե նկատի ունենանք, որ N175 և N410 հրամաններում 47 հոդվածի “Բ” կետի պարզաբանման մեջ տվյալ ախտորոշման մասով որևէ փոփոխություն չի եղել: